№ 131 ՀԻՆԳՇԱԲԹԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 16 1889 ՀԻՆԳՇԱԲԹԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 16 № 131

ՏԱՍՆ ԵՒ ԵՕԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Տարեկան գինը 10 ռուբլի, կէս տարվանը 6 ռուբլի։
Առանձին համարները 7 կոպէկով։

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ։

Մեր հասցէն. Тифлисъ. Редакція «Мшакъ».
կամ Tiflis. Rédaction «Mschak».

ՄՇԱԿ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ (բացի կիրակի և տօն օրերից)։

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով։

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր բառին 2 կոպէկ։

ԱՌԱՋԻԿԱՅ 1890 ԹԻԱԿԱՆԻՆ

„ՄՇԱԿ"

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ

կը հրատարակվի Թիֆլիսում, նոյն դիրքով և նոյն պրոգրամայով։ Մենք ստանում ենք սեփական ՀԵՌԱԳԻՐՆԵՐ։

«ՄՇԱԿԻ» տարեկան գինը 10 ռուբլի է, վեց ամվանը 6 ռուբլի։

Գրվել «ՄՇԱԿԻՆ» կարելի է ԽՄԲԱԳՐԱՏԱՆԸ (Բարօնակայա և Բաղարնայա փողոցների անկիւնում, Թամամշևի տանը)։

Կայսրութեան ուրիշ քաղաքներից «ՄՇԱԿԻՆ» գրվելու համար պէտք է դիմել հետևեալ հասցէով. ТИФЛИСЪ, Редакція газеты «МШАКЪ», իսկ արտասահմանից. Tiflis, Rédaction du journal arménien «MSCHAK».

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Տեղեկութիւններ Սուրմալուի գաւառից. Նամակ խմբագրին. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Անգլօ-Գերմանական դաշնակցութիւնը. Արտաքին լուրեր.—ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ.—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.—ԲՕՐՍԱ.—ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Նամակներ Թիւրքաց Հայաստանից.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ՍՈՒՐՄԱԼՈՒԻ ԳԱՒԱՌԻՑ

—

«Տանու տէրտէրին օրհնեայ տէր չը կայ», և ճիշտ այդ դրութեան մէջ է հայ լրագրի վիճակը Իգդիրում.—որքան էլ հետաքրքիր լինի հայ լրագիրը իր բազմակողմանի և օգտակար նիւթերով, այնու ամենայնի Իգդիրի հայ ընթերցողի համար նշանակութիւն չունի այդ. նա կը կարդայ և մի կողմ կը դցի շատ անտարբեր կերպով. բայց տուէք այդ ընթերցողին օտարազգի թէպէտ և մի ամենայիմար լրագիր, նա մինչև անգամ ուրիշի գլուխը կը տանի, թէ այսօր այս ինչ օտարազգի լրագրի մէջ այն ինչ բանը կարդացի և այլն։

«Մշակի» անցեալ համարներում Սուրմալուից նամակ կար, որի մէջ խօսվում էր շտեմարանների անհրաժեշտութեան և նրանց կանոնաւորելու մասին, գիւղական իշխանների մասին, միամիտ գիւղացիների մի քանի իշխաններից կողոպտվելու մասին։ Այդ յօդուածը, ինչպէս նաև ուրիշ շատ նշանաւոր յօդուածներ, այստեղ կարդացվեցան և այնպէս մոռացվեցան, որ կարծես բոլորովին իրանց կեանքի վատ երեոյթները չէր շօշափել, այդ փաստերը բոլորովին գոյութիւն չեն ունեցել և այդ գործող՝ դիւղական աւազակ իշխանները մի քանի դար առաջ անհետացել են։

Իգդիրի դպրոցական գործերը կաղ ի կաղ են ընթանում, որովհետև ուսուցիչներից երեքը չաբաթվայ մէջ վեց լի օրերն էլ հիւանդ են լինում։ Երևի շատ վարձ էին ստանում խեղճ ուսուցիչները, որի մի մասն էլ բնութեան չարիքն է խլում դեղերի համար։ Պէտք է շնորհակալութիւն յայտնել գաւառական բժիշկ Բարսուկովին, որ նա ձրի բժշկում է թէ ուսուցիչներին և թէ նրանց տան միւս հիւանդներին։ Առհասարակ բժիշկ պ. Բարսուկովից շնորհակալ են նաև Իգդիրի միւս աղքատ հիւանդները, նրանից ձրի օգնութիւն ստանալու համար։

Ցիշեալ դպրոցի գրադարանի վրա այս տարի խնամքը պակաս է և անկանոն է պահպանվում։ Անցեալ տարի օրինակելի էր յիշեալ գրադարանի կարգապահութիւնը և պահպանութիւնը։ Այս տարվայ գրադարանի անկանոնութիւնը պէտք է վերագրել հոգաբարձուների սովորական մեռելութեանը, որոնք, միացած աւագ ուսուցչի հետ, շատ կոչտ կերպով վարվեցան թէ նոր ընդունված և թէ հին ուսուցիչների հետ, որի պատճառով ուսուցիչները պաշտօնական կերպով մնում են դասարան, դասախօսում և դուրս գալիս։ Նախկին երեք տարիները ուսուցիչները դպրոցական ամեն մի գործ իրանց ուսերի վրա էին տանում, առանձին խնամք և աշխատութիւն էին գործադնում դպրոցների առաջադիմութեան համար։ Նիւթականի մասին էլ հոգում էին իրանք ուսուցիչները, հետևեալ օգտակար միջոցներով, առանց դպրոցի պատիւը վիրաւորելու.—տալիս էին ներկայացումներ, կազմում էին գրական երեկոներ, ման էին դալիս «այսօր տան է» և այլն, իսկ այս տարի ամեն բան մեռելութեան է մատնված։ Միթէ կարող է առաջադիմութիւն լինել այնտեղ, ուր սիրոյ և համերաշխութեան փոխարէն ինտրիգաներ են լարվում։

Նոյն դպրոցի աշակերտներին, ժամանակաւոր ուսուցիչ Սեդրակ Խաչատրեան (այս էլ մի նոր սիստեմ է հայ դպրոցների համար) սովորեցնում է առանց գործիքների թեթև մարմնամարզութիւն, որի գոյութիւն ունենալը հայոց դպրոցների մէջ շատ ուրախալի է. բայց մենք խորհուրդ կը տանք, որ նա մանուկներին իրանց ծանօթ մայրենի բարբառով մարմնամարզական հրամաններ տայ, որով աւելի դիւրին կերպով կը սովորեն հայ մանուկները այդ օգտակար արհեստը։

***

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

—

Երևան, 8 նոյեմբերի

«Մշակի» 125-որդ համարում տպված Երևանից գրած թղթակցութեան մէջ կարդացի Երևանի թեմական դպրանոցի մասին զրպարտութիւնների մի շարք, որին և հարկաւոր եմ համարում պատասխանել, ոչ թէ իմ անձնաւորութիւնս պաշտպանելու նպատակով, այլ ճշմարտութիւնը պաշտպանելու և հասարակութիւնը նախազգուշացնելու համար այնպիսիների դէմ, որոնք չոչափում են այնպիսի հաստատութիւններ, որպիսի են մեր դպրոցները։ Ես միանգամայն համաձայն եմ, որ կենսական, մանաւանդ հասարակական շահերին վերաբերեալ անճոռնի երևոյթները հարկաւոր է երևան բերել և հասարակութեան դատին ենթարկել։ Հասարակական ախտերը բուժելու գլխաւոր և ամենաօգտակար միջոցը այդ է. բայց հէնց այդ իսկ պատճառով ազնիւ մարդու պարտքն է շատ մեծ զգուշութեամբ և բարեխղճութեամբ գործադրել այդ իրաւունքը, որը չէ անում զրպարտութիւնների հեղինակը և ահա ինչ պատճառով։

Ներկայ հոգաբարձութիւնը, դպրանոցի մի քանի առարկաների համար ցանկացաւ հաստատել հայերեն ուսուցիչներ ունենալ, որի մասին և իր ժամանակին յայտարարվեց լրագիրներում։ Ով ծանօթ է մեր դպրոցների սուղ նիւթական թերութիւնին է քրքրում և դեռ ոչ ոք կայ, որ գրէ թէ ինչ է անում գաւառացին, ինչպէս է ապրում, ինչպէս են նրա սովորութիւնները...

Դուք ռուսահայերդ գրական մարդիկ էք և ամենայն իրաւամբ մեզ կոչում էք «հոսոսներ»... եթէ Աստուած տուաւ, մտայ Կ. Պոլիս, մտադիր եմ տեսնել թէ ինչպէս են անում մեր գործիչները, գրագէտները և լրագիրները, որոնք առ այժմ յուսահատութիւն են ազդում.... և այդ մասին այն ժամանակ երկար կը գրեմ, բայց այս նամակով ես մտադիր չեմ նրա վրա խօսել, այսքանն էլ ասելուն քո ուղարկելի գիրքդ առիթ տուաւ։ Այս նամակս ես նուիրում եմ վանեցի կնոջ։

Վանեցի կինը ներկայացուցիչն է Վասպուրականի կանանց և վասպուրականցի կանայք՝ Շատախի, Մուշի, Խիզանի, Բաղէշի և այլն կանանց ներկայացուցիչներն են. այնպէս որ՝ ծանօթացնելով վանեցի կնոջ հետ, ծանօթացրած կը լինեմ միանգամայն և բոլոր Թիւրքա-Հայաստանի կանանց հետ, բացի Էրզրումինը։

Իրաւ է, Էրզրումում հայ կինը նոյն աշխատասէր, նոյն գործունեայ, նոյն պարապութիւնից զզվող, նոյն ճարպիկ կինն էր, բայց անցան այն ժամանակները... տասը տարի է որ Էրզրումի կանանց թէ հագուստները, թէ սովորութիւնները և թէ բնաւորութիւնները կիսովին փոխվել են։

Այժմ Էրզրումում կինը խօսում է, եթէ խօսեցնես, ծիծաղում է, եթէ ծիծաղեցնես, խմում է և ուտում, եթէ առաջարկես և իր կարծիքն էլ յայտնում է, եթէ վիճես. նա ման է գալիս երեսը բաց, փողոցի մէջտեղից, զբօսնում է քաղաքից դուրս, թուղթ և «թավլու» խաղալ, ծխել, պարել մարդկանց առջև, երգել էլ գիտէ. մինչև անգամ գիտէ գոռալ խլացնելու չափ, պարապ նստել և սրանը-նրան բամբասել, Նկեղեցի գնալ միայն խօսելու, սրա-նրա հագուստը քննադատելու, այս-այն աղջկայ դէմքը դիտելու, այս-այն մարդու շարժուածքը զննելու համար. հարկ եղած ժամանակն էլ գիտէ լաւ ապուխտ չինել սխտորով և «չէմինով» (մի համեմ է), գիտէ լուալ, աղայոց հագցնել մաքուր, ինքն հագնվել թանգագին կոտորներով, գոյնզգոյն չրջաղգեստներով, սամոյրէ մուշտակով, նուրբ էհրամը իր կարմիր հագուստի վրա առնել լաւ գիտէ, էհրամին լեղակով գոյն տալ, որ գեղեցիկ երևայ, ամիսը մի էհրամ փոխել, ոսկիներից մանեակներ ունենալ էլ գիտէ, ամեն օր մէկի տուն երթալ ուտել և խմել, խաղալ և պարել էլ գիտէ։ Էրզրումցի կինը շատ էլ սիրում է նուազածութիւնը, խնջոյը, հարսանիք և կը կատաղի, եթէ ինքը նրա մէջ չը լինի. Էրզրումցի աղջիկը տղայի հետ սիրաբանել էլ գիտէ և մի գեղեցիկ օր իր հօր տանից փախչել էլ գիտէ....

Իսկ խեղճ վանեցի կինը ոչ խօսում է, եթէ խօսեցնես, այլ գլխով և լռութեամբ պատասխանում է կամ փախչում, ոչ ծիծաղել գիտէ, ոչ խմել և ուտել, ոչ կարծիք յայտնել՝ մարդկանց առջև։ Նա ման է գալիս երեսը այնպէս ծածկած, որ կարծես պարսիկ կին լինի. փողոցի պատերի տակից քսվելով է անցնում, մարդկանց ճանապարհ է տալիս պատին կպչելով, զբօսնում է միայն մարդկանցից հեռու տեղեր, իր պարտիզի ծառերի տակը և միշտ վախվխելով՝ թէ իրան կը տեսնէ մի տղամարդ. ոչ խաղալ գիտէ, ոչ ծխել և ոչ իսկ պարել՝ մարդկանց առջև. շատ հաւանական պարագայ պիտի լինի, որ նրան զոնէ բերեն առջևդ, և իրր մի կով, քեզ ներկայացնեն. խօսեցնես—լուռ է, կամ իր ամուսնու ականջին փսփսում է պատասխանդ և կամ իր որդու միջոցով քեզ հետ մի երկու խօսք է խօսում։ Խեղճ կինը շատ քիչ անգամ վայելում է իր ամուսնու հետ ճաշելու իրաւունքն իսկ. Նա առանձին է ճաշում. երբ ջուր է խմում, պարտաւոր է երեսը պատին դարձնել, երբ հաց է ուտում, պարտաւոր է երեսը շրջել մի կողմ, երբ ներս է մտնում, պարտաւոր է կանգնել մինչև հրաւիրես նստել և երբ նստել է, չարչարվել՝ մինչև որ ազատվի և վազի փոքր ինչ շունչ առնելու միայն «տան-տունի» *) մէջ, ուր նա թոնրի մէջ պատրաստում է ճաշը, աքացնում է կաթը, հանում է սերը, մակարդում է մածունը, ժողովում է կարագը, պատրաստում է թանը և պանիրը և յետոյ նստում է կամ իր ամուսնու և որդոց պատուված հագուստները կարկատելու, գուլպաները լեցնելու թելով և կամ գուլպա է գործում կաչեայ բարձի վրա, բուրդ և բամբակ է գզում, աթար է թխում վառելու, այգու ծառերի տերևներն է աւելում, պտուղներն է չորացնում, շատ անգամ իսկ այգին է ջրում և բոյսերը խնամում ու ածուները բահով փորելով՝ օգնում է իր ամուսնուն։

Այս բոլորը և դեռ սրանից շատ և շատ աւելի անում է վանեցի կինը. անխոնջ աշխատող է, այնչափ սովորել է, որ մի բոպէի պարապութիւնը նրա համար մահ է. եթէ ստիպես պարապ նստելու, իսկոյն քունը կը տանի և քնի մէջ իսկ կարգադրութիւններ կանէ, հրամաններ կը տայ իր աղջիկներին և հարսներին։

Այս բոլորից բացի, վանեցի կինը գնում է չուկան առևտուր անելու տան հագուստների համար, գնում է եկեղեցի, ջերմեռանդութեամբ աղօթում է և երբ սկսում է խօսել՝ յիշելով որ գործ ունի, շտապում, տուն է վազում, կարմիր չիլէ չապիկը հանում է վրայից և սպիտակ ծածկոցի հետ սնտուկն է դնում, դէլմէի *) երկար քղանցքը ժողովում է ետը մէջքի վրա

*) Տան տուն կամ թորվան տուն, ուր լինում է թոնիրը, ուր գործում են և ուր շատ անգամ պառկում, ուտում և կամ ոտները թոնրի մէջ կախելով ձմեռը խօսում են և զուարճանում երեկոները։

*) Սա մի երկար կանացի վերարկու է մինչև ոտները հասնող.—երիտասարդներինը կարված է կարմիր, իսկ պառաւներինը կապոյտ մահուդից։

թական վիճակի և մեր մէջ համալսարանական-ների հաղագիւտ լինելու հետ, կը հասկանայ թէ որքան դժուարութիւն պիտի կրէր Երևանի թեմական դպրանոցի հոգաբարձութիւնը իր նը պատակն իրագործելու համար։ Այդպէս էլ պատահեց. համալսարանական, որը ցանկացաւ ուսուցչի պաշտօն ստանձնել դպրանոցում, գտնվեց միայն մէկը. բայց այդ մէկի հետ էլ համաձայնութիւն չը կայացաւ, որովհետև հոգաբարձութիւնը չը կարողացաւ տալ պարոնի պահանջած, թէև չափաւոր, բայց դպրանոցի նիւթական կարողութիւնից վեր վարձը։ Ահա այսպիսի հանգամանքներում հոգաբարձութիւնը հրաւիրեց մի նորաւարտ համալսարանական, մատչելի վարձատրութեամբ, որը և ընդունեց առաջարկութիւնը, խոստանալով անյապաղ գալ Երևան, երբ կաւարտի իր քննութիւնները պետական յանձնաժողովում։ Առաջ քան հոկտեմբերի 25-ի այդ պարոնը արդէն եկած և սկսած էր իր գործը։ Ո՞րտեղից, ուրեմն, ժողովում է թղթակիցը իր տեղեկութիւնները։

Թղթակիցը գրում է թէ դպրանոցում տիրում է ծեծ և հայհոյանք. վերակացուն, քանոնը ձեռքին, աջ ու ձախ ծեծում է, և տեսուչը ոչ միայն չէ արգելում, այլ շատ անգամ ինքն է տեղիք տալիս, չը նայելով ուսուցիչների մշտական բողոքին։ Այս բոլորը զրպարտութիւններ են, որովհետև հայհոյանքը և ծեծը ոչ միայն դպրանոցում ընդունված կրթական ձևեր չեն եղած և չը կան, այլ մանկավարժական ժողովներում ուսուցիչները և գլխաւորապէս ինքը տեսուչը միշտ ամեն տեսակ խստութիւնների դէմ են եղել և երբ և իցէ ոչ ոքի թոյլ տուած չեն եղել ծեծել կամ հայհոյել աշակերտներին։ Այդ կարող է հաստատել ամբողջ ուսուցչական խումբը, որի անդամները թէ ժողովներում և թէ մասնաւոր կերպով երբէք բողոքած չեն, թէ վերակացուն, քանոնը ձեռքին, կամ մի այլ ոք մի ուրիշ կերպով հայհոյում և ծեծում են աշակերտներին։ Մենք միշտ հրապարակով ասել ենք և կը շարունակենք ասել, որ մեզ համար ցանկալի չէ, որ աշակերտը զրկվայ իր դպրոցական իշխանաւորների առաջ։ Մենք չենք ցանկանում զանազան խիստ միջոցներով ճնշել աշակերտի հոգին, և արգելքներ դնել այդ հոգուն այն արտայայտութիւններին, որոնց $^{9}/_{10}$ մասը մեր հասարակութեան մեծամասնութիւնը «չարութիւն» է կոչում և պատժի արժանի համարում, իսկ մենք երեխայական հասակում մի բնական և անհրաժեշտ երևոյթ ենք համարում։ Մենք կը գերադասենք, որ մեր երեխաները ա-

ուելի չար այծի նմանէին, քան հեզ ոչխարի, որի տիպը մինչև օրս եղել է հայ ժողովրդի իդէալը....

Ինչ որ վերաբերում է թղթակցի յիշած տեսչի բացակայութիւններին և դրանից առաջացած ուսուցիչների կամայականութեան,—այդ ասել՝ մի կողմից անբարեխղճութիւն է և միւս կողմից անհասկացողութիւն թղթակցի կողմից։ Անբարեխղճութիւն է այն պատճառով, որ Երևանում ամենին յայտնի է, և անկասկած ինքը թղթակիցն էլ գիտէ, թէ դպրանոցի նախակրթարաններն Ս. Սարգիս եկեղեցու գաւթում գտնված դպրանոցական շինութեան փոքրութեան պատճառով՝ տեղափոխված են և գտնվում են Ս. Կաթուղիկէ և Ս. Յովհաննէս եկեղեցիների գաւիթներում և տեսուչը պարտաւոր է հսկողութիւն ունենալ և միշտ այցելել այդ բաժինները, որոնք դպրանոցից գտնվում են մօտ երկու վերստ հեռաւորութեան վրա։ Անկասկած տեսուչը, ինչպէս և ամեն մի մահկանացու, կարող է և իր մասնաւոր գործերն ունենալ և դրանց պատճառով երբեմն բացակայ լինել. բայց այդ կանոն և սովորական երևոյթ չէ դարձել տեսչի համար, ինչպէս գրում է թղթակիցը, ասելով թէ «տեսուչը դասերը սկսելուց միշտ մէկ կամ երկու ժամ ուշ է գալիս և շատ անգամ էլ դասատուութիւնը չը վերջացած գնում....»։ Դա բոլորովին սուտ է, որովհետև տեսուչը ոչ թէ միշտ, այլ սակաւ կը պատահի, որ առաջին դասի ժամանակ դպրանոցում չը գտնվի և շատ սակաւ կը պատահի, որ դասատուութիւնը չը վերջացած նա հեռանայ, քանի որ նա ինքը շաբաթվայ ընթացքում չորս օր հէնց հինգերորդ (վերջին) դասերն ունի։ Գործին ծանօթ մարդը կարող է վկայել, որ տեսուչը ոչ միայն չէ բացակայում իր դասերից, այլ շատ անգամ պարապում է բացակայ ուսուցիչների փոխարէն։ Անհասկացողութիւն է թղթակցի կողմից այն, որ նա ուսուցիչների իրանց գործը սրբութեամբ կատարելու շարժառիթը համարում է ոչ թէ պարտաճանաչութիւն, այլ ստիպողութիւն և տեսչի «երեսից քաշվելը»։ Այն ուսուցիչը, որը գործում է միայն այս վերջին պատճառներով, երբէք օգտաւէտ լինել չէ կարող. եթէ նա չունի սէր և եռանդ դէպի իր գործը և չէ ճանաչում իր պարտքը, նա դասարանումն էլ ոչինչ չի անի։

Ի վերջոյ թղթակիցը հրաւիրում է սրբազան առաջնորդի ուշադրութիւնը. սրբազանը տեսչի հետ աղգականութիւն և խնամութիւն չունի, և որքան մեզ յայտնի է, թոյլ և կարճատես ան-

ձինքների շարքում չէ համարվում, ուստի և յուշարարների կարօտութիւն չը պիտի ունենայ իր գործը արժանաւոր կերպով կատարելու համար։

Տեսուչ Երևանի թեմական դպրանոցի՝ բժիշկ Մնացական Յարութիւնեանց

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Նոյեմբերի 14-ին, երեքշաբթի օր, Նորին Կայսերական Մեծութեան թագուհու կայսրուհու ծննդեան տօնը լինելով, Թիֆլիսի բոլոր դաւանութիւնների եկեղեցիներում մաղթանքներ կատարվեցան, քաղաքի բոլոր փողոցները դրօշակներով էին զարդարված, իսկ երեկոյեան քաղաքը լուսաւորված էր։

—

Հայերէն գրքերի հրատարակութեան Թիֆլիսի ընկերութեան վարչութեան ատենապետ պ. Փիլիպոս Վարդանեան ուղարկել է մեզ հետևեալ նամակը «Մշակի» մէջ տպագրելու համար. «Հայերէն գրքերի հրատարակութեան ընկերութեան վարչութիւնը խնդրում է ձեզ զեղեցել ձեր լրագրում իր հրատարակած գրքերի ցուցակը և յայտնել թէ ընկերութեան յարգելի անդամները կարող են ստանալ «Սոկրատէս» գրքոյկը Կենտրոնական գրավաճառանոցում։ Կատարելով պ. Վարդանեանի խնդիրքը, տպում ենք գրքերի ցուցակը մեր լրագրի յայտարարութիւնների բաժնում։

—

Մենք գիտաւորութիւն ունենք շուտով առանձին գրքով հրատարակել Գրիգոր Արծրունու նամակները և տպաւորութիւնները Պարիզից։ Այդ գրուածները կը հրատարակվեն առանց փոփոխութեան, միայն գրքի գլխները փոխանակ թվանշաններ կրելու, կը կրեն առանձին-առանձին վերնագիրներ։

—

«Новости» լրագիրը հաղորդում է, որ կինբժիշկ Վենիամինովա ստացել է Մոսկվայի բնագիտական ընկերութիւնից ոսկէ մեդալ իր գրուածքի համար Կովկասեան իգական ազգաբնակութեան անտրոպոլոգիայի մասին, որը կրում է հետևեալ վերնագիրը. «Къ антропологіи женскаго населенія Кавказа».

—

Կ. Պոլսից մեզ գրում են հետևեալը, նոյեմբերի 4-ից. «Երեք չորս տարիէ ի վեր ունենք կենտրո-

նական վարժարան մը Պոլսի կենտրոն մի վայրի մէջ, ի Ղալաթիա։ Այդ վարժարան կը մատակարարուի եկեղեցապատկան հասոյթներով, տղայոց թոշակներով և այլ միջոցներով։ Խնամակալութիւն մը կը հսկէ դպրոցին վրայ, կամ աւելի ճիշդը, կը կառավարէ զայն։ Այդ խնամակալութիւն կազմուած է առնտրական դասուն պատկանող անձերէ և մի քանի ուսեալ երիտասարդներէ։ Պ. Մինաս Չերազ անդամ էր այդ խնամակալութեան և միանգամայն դպրոցի տեսուչ։ Սակայն տեսչի պաշտօնը շատ սահմանափակ է. ոչինչ է կարող ընել առանց խնամակալութեան հրամանի. ոչ մի աշակերտի մասին տնօրինութիւն մը ընել, ոչ մի դասախօսութեան ժամն անգամ քառորդ մը փոփոխութեան ենթարկել։ Տեսուչը պարզապէս մի կարգապահ է, պարզապէս գործադիր մըն է։ Պ. Չերազ խնամակալութեան անդամ, մեծապէս յարգուած ու սիրուած ամենէն, բաւական խոհեմ ի հարկին, կըրցաւ ճարտարութեամբ վարել իր պաշտօն մի քանի տարի, գոհ թողլով խնամակալութիւն և աշակերտներ։ Պ. Չերազի մեկնելովը խնամակալութիւնը բաւական չուարած մնաց։ Ո՞ւմ պիտի ընտրէր տեսուչ։ Այդ պաշտօնին պէտք էր այնպիսի անձ մը, որ այնքան արժանիք ունենայ և հեղինակութիւն, որ բոլոր ուսուցիչները և աշակերտները ակնածին իրմէն և մեծաւ յարգանքը վարուին հետը, բայց միանգամայն ըլլայ այնքան խոնարհամիտ, որ խնամակալութեան հանդէպ իբր յոյժ երկրորդական պաշտօնեայ մը խոնարհի, անոր հրամանները գործադրէ և Աստուած կեանք տայ լսելով գոհանայ։ Դժբաղդաբար ըսենք թէ բարեբաղդաբար, որ Պոլսի հայոց մէջ չը գտնուեցաւ այնպիսի անձնաւորութիւն մը, որ խնամակալութեան այդ մատափարն ըլլար։ Խնամակալութիւնը Ֆրանսական տեսուչ մը գտնելու խորհուրդը յղացաւ. այդ միջոցին խնամակալութեան անդամներէն պ. Նսայեանի տունը մի զուիցերիացի եկաւ, իբր տան վարժապետ. այդ մարդ նախախնամական առաքեալ մը համարուեցաւ. խնամակալութիւնը զնա ընդունեց դպրոցի կարգապահ, սակայն յաչս հանրութեան նկատուեցաւ յաջորդ պ. Չերազի։ Այս տեսչին աւելի ընդարձակ իրաւունքներ տրուեցան։ Թէ ինչ կը լինի մի այդպիսի կարգադրութեան հետևանքը՝—այդ ապագան ցոյց կը տայ։»

—

ԿՈՂԲԻՑ մեզ գրում են հետևեալը. «Կողբեցի հարուստ վաճառական պ. Կարապետ Տէր-Սահակեան տեղեկանալով որ՝ ս. Յովհաննու

գունդ է անում, ոտից մինչև գլուխ ծածկող գոգնոցը կապում է, թոնիրը վառում, ծուխի մէջ սպասում, կերակուրները դնում է եփելու, ամանները լուանում, լուացքը անում և տաք ջուր է պատրաստում իր ամուսնու և որդկերանց լողացնելու, որովհետև վանեցին տան մէջ է լողանում, նա բաղնիս երթալ չը գիտէ։ Եւ դրա համար է, որ Վանի մէջ միայն երկու բաղնիս կայ, որոնք ծառայում են միայն թիւրքերին, օտարազգիներին և քաղաքակրթված կոչվող երիտասարդներին։

Այս բոլոր նեղութիւնները կրում է վանեցի կինը. զուարթ է նա, առողջ, գերիի պէս հնազանդ իր ամուսնուն.... բոլորովին չէ խառնվում ամուսնու գործին, սակայն տխրում է ամուսնու հետ, ուրախանում է նրա հետ, սիրում է նրան անսահման սիրով, ինայողութեան համար ամեն միջոց գործ է դնում, իր հագուստները և զարդերը ամեն բոպէ պատրաստ է ամուսնու ձեռքը դնելու, եթէ սա մի դժբաղդութեան մէջ ընկաւ. սաստիկ մաքրասէր է. նրա տան մէջ ամեն ինչ մաքուր է. բակը, պարտէզը, սենեակները, ամանները, կահ-կարասիքը—բոլորը փոշիից ազատ՝ փայլում են։

Եւ դեռ ես կտաւ, մանուսայ և այլն գործել էլ գիտէ վանեցի կինը. պատրաստում է ամենահամեղ կերակուրներ, ոչ մի տեղ վանեցի կնոջ բռնած թթուեղէնի պէս թթուեղէն, չորցրած պտուղների, պահած տանձերի, ոլորած բանջարեղէնների պէս պահել և ունենալ չեն կարող։

Գալիս է աշունը, պիտի պատրաստել ձմեռվայ պաշարը։ Վանեցի կինը իր թխած աթարները շարում է միմեանց վրա, գնած «դեազը *) դիզում է, իլղը լցնում է, պանիրը դարսում է, աւիւրը լցնում է մեծ մեծ փայտեայ պահարաննե-

*) Սա մի տեսակ փուշ է վառելու համար։

րի մէջ, հաց է թխում, բաղարջ է պատրաստում, խաղող է կախում, զինու կարասները թաղում հողի մէջ, այգին է դնում այգեկութ անելու, շատ անգամ ինքն է խաղողը կոխոտում և քաղցուն կարասների մէջ լցնում,—մի խօսքով նա մի վայրկեան իսկ պարապ չէ և չէ էլ սովորած լինելու։

Բնաւորութեամբ նա շատ համեստ է, հագնվում է խիստ անպաճոյճ. մի մանիսայի զբաղուն (շերտաւոր կարմիր կտոր), մի կարմիր մահուդի «դէլմէ», մի արծաթեայ «քնար» (ճակատի զարդ) գլխի վրա՝ եթէ ամուսինը հաճէ բերել, մի հասարակ կարմիր կօշիկ, մի սպիտակ ծածկոց, մի չիլէ չապիկ,—և ահա վանեցի կնոջ թէ տան միջի և թէ դրսի հագուստը լրացած է, եթէ ունենայ նաև գլխին փաթաթելու 5—6 հատ եաղմաներ և թաշկինակներ, որովհետև վանեցի կինը լաւ փաթաթում է գլուխը, եաղմայի ծայրը իջեցնում է մինչև աչքերը, ծնօտի կողմից կապում է մի «եաշմաղ» կոչվող սպիտակ շոր, իսկ դուրս ելնելու ժամանակ նա հագնում է չիլէ չապիկը և ծածկվում սպիտակ սաւանով։

Պարկեշտ են համարում վանեցի կնոջը. նա անբարոյական և մինչև լիրբ է համարում այն կընոջ, որը մի օտար մարդու հետ կը խօսի կամ կը ծիծաղի։ Շատ բարեպաշտ է վանեցի կինը, աղօթում է քնելուց առաջ, տալիս է իր զարդերը աղքատի, եկեղեցու. աղքատին դատարկ ձեռքով չէ դարձնում իր դռնից, դրացի աղքատ ընտանիքին միշտ հոգում է, մանաւանդ տօն օրերը, ուխտատեղիներ է գնում անդադար, շատ անգամ ոտաբոբիկ և լուռ, ունի կրօնական բոլոր նախապաշարումները, յարգում է անխտիր կրօնաւորական կարգը, բայց և գիտէ «խօրեմ նրա գլուխը (թաղեմ նրա գլուխը), ժուռկուճոփամեռ *), աւալթաւալամեռ **) կօռա-

*) Այս բառը բարդ բառ է և բաղկացած է

տար ուտի» (զահրիմար ուտի) անէծքներով վերաբերվել դէպի վատ կրօնաւորները։ Վանեցի կինն ուսումնասէր էլ է, նա հոգին կը հանէ իր տղայի, եթէ սա մի օր ուսումնարան գնալու փոխարէն փախչի ձորը և այնտեղ գետի մէջ խաղայ. ամեն երեկոյ նա գիտէ հարցնել տղայից սովորածը, պատմել տալ, լսել և թէև ոչինչ չէ հասկանում, բայց հրճվում է, համբուրում իր մանուկին և ամեն նստած տեղում գովասանքով է խօսում և պարծենալով ցոյց տալիս նրան։ Նա յարգում է վարժապետին, միշտ իր մանկան ձեռքով ընծաներ է ուղարկում նրան, տեսած ժամանակ շնորհակալ է լինում, որովհետև վանեցի կինը, բացառապէս, հարկ եղած ժամանակ միայն կրօնաւորի և վարժապետի հետ է խօսում։

Այդ մասին քեզ մի փոքրիկ ծիծաղելի բան պատմեմ։

Ես ծանօթացել էի իմ հիւրընկալիս պառաւ մօր հետ, նոյնպէս և հիւրընկալիս կնոջ հետ. վերջինս թէև չէր խօսում ուղղակի ինձ հետ, բայց ինձ պատասխանելու համար իր սկեսուրի ականջին այնպէս բարձր փսփսում էր, որ ես լսում էի նրան և նա չէր փախչում ինձանից։

Մի օր նստել խօսում էինք, երբ յանկարծ սենեակի դուռը բաղխեց իմ ծանօթ երիտասարդներից մէկը. հիւրընկալիս կինը ուզեց փախչել, բայց ճանապարհ չը կար, ուստի և մտաւ անկողնու պահարանի մէջ։ Ես երկար խօսեցի իմ բարեկամիս հետ և ծիծաղս չէի կարողանում պահել, երբ բարեկամս զարմացած չորս կողմն էր նայում, լսելով զսպուած հազեր և փռնքտալներ. վերջապէս բարեկամս զուշակեց, թէ ինչ էր

ժուռ (խակ), կուճոփ (կճեպ), ամեռ (մեռնող), այսինքն խակ կճեպով մեռնող—երիտասարդ հասակի մէջ մեռնես։

**) Բարդ բառ է, բաղկացած է, աւալթաւալ (տապլտկել) և մեռ բառերից. սա էլ նշանակում է՝ տապլտկելով մեռնես արեանդ մէջ։

եղել և հարցրեց թէ ով է պահարանի մէջ։

—Իմ հարսն է, ասեց հիւրընկալիս մայրը ամաչելով։

—Հոգ չէ, թող դայ երթայ, ասաց բարեկամս,—կը խեղդվի պահարանի մէջ, ես երեսս կը դարձնեմ։

Եւ երեսը դարձուց պատին. սկեսուրը հանեց կապած հարսին պահարանից և հարսը շտապով դուրս փախաւ...

Պէտք է նկատել, որ Կ. Պոլիս գնացող և եկող կանայք ու մարդիկ սկսել են ծուլացնել, չռայլութեան վարժեցնել և անպարկեշտացնել Նորերին։

—Պոլիս ասանկ են անում, Պոլիս ասանք կը հագնուին կոր, Պոլսէն քեզ շատ խօրօտ ֆիստան (սիրուն շրջազգեստ) եմ բերեր կոր, Պոլիս կը խօսեն կոր մարեկանց հետ, դուն ալ պիտի խօսիս, Պոլիս եկեղեցի շատ չեն երթար կոր, Պոլիս.... և այլն ամեն տեսակ միջոցներով սովորցնում են զարդարվելու, դեղեցիկ երևալու, խաղալու և պարելու, շատախօսելու և կոտրըտվելու վրա միայն մտածել։

Այդ մեծ ախտը, ցաւ է խոստովանել, մեծ մասամբ սկսեց վարժուհիներից. գուցէ կը գրեմ դեռ ես այդ տեսակ վարժուհիների մասին, որոնք կրթում են մեր ապագայ մայրերը։

Այժմեան նորահարսը սիրում է զարդարվել, եկեղեցի գնալ միայն խօսելու և իրան ցոյց տալու համար, մինչդեռ իր ամուսինը պարքերի մէջ խեղդվում է, ինքը իր վզի ոսկիների շարքերն է աւելացնում, միշտ ման է գալիս, միշտ ուխտատեղիները զբօսանքի է գնում, աշխատել չէ սիրում....

Էլ բաւական է, Աստուած գիտէ, թէ դեռ ես այս կործանիչ պանդխտութիւնը քանի քանի հազարներ պիտի ոչնչացնէ, քանի՞ մայրեր և հայրեր հրէշացնէ։

Ապրօ·

վանքի վանահայր և Բագրևանդ գաւառի առաջնորդ Յովհաննէս եպիսկոպոսը ձեռնարկել է վանքին բարոյական և նիւթական վիճակը բարելաւելու, նուիրել է յիշեալ վանքին մի նոր եւրոպական էրան (վէեալկա) մշակական գործը դիւրացնելու համար։ Այդ մեքենան գարնանը տեղափոխվելու է ս. Յովհաննու վանքը։ Այդ կողմից մեծ շնորհակալութեան արժանի է պ. Կարապետ Տէր-Սահակեան և ցանկալի է, որ միւս հարուստ հայերն էլ իրանց նիւթականով նըպաստէին այդ վանքի բարեկարգելուն։ Իսկապէս, ինչպէս երևում է նորին սրբազնութեան ձեռնարկութիւններից, յիշեալ վանքի բարոյական և նիւթական մինչև անգամ անկեալ դրութիւնը մօտիկ ապագայում միանգամայն բարեփոխվելու է։ Եկող տարվանից յիշեալ վանքում բացվելու է նաև մի վանական, բայց կանոնաւոր դպրոց։ Այդ պատճառով ցանկալի է, որ հայերը չը զլանան օգնել ծերունի, բայց եռանդուն և ժողովրդասէր Յովհաննէս եպիսկոպոսին գոնէ դպրոցական առարկաներով և երկրագործական եւրոպական նոր մեքենաներով։»

—

Մի քանի տեղեկութիւններ Սասուն գաւառի մասին։ Սասուն գաւառակը ընկած է Մուշի և Տիգրանակերտի մէջտեղ։ Լեռնոտ երկիր է և շատ տեղ նոյն իսկ անմերձանելի։ Երկրի դիրքի պատճառով սասունցիները վաղուց յայտնի են իրանց անվեհերութեամբ և քաջութեամբ։ Սասուն գաւառը, որը որքան մեզ յայտնի է, Բաղէշի կուսակալութեանն է պատկանում, ունի մօտ 7,000 բնակիչներ, որոնց մեծ մասը հայեր են, և որոնց հետ ապրում են և բազմաթիւ քիւրդ ցեղեր։

—

Նոյեմբերի 13-ին կայացած քաղաքային դումայի նիստը իր պարապմունքների կողմից մի առանձին հետաքրքրութիւն չէր ներկայացնում։ Զայնաւորների նիստը զբաղվեց մի քանի երկրորդական հարցերով։ Մեր քաղաքի գործերին անծանօթը կարող է կարծել, թէ քաղաքը այնքան երջանիկ դրութեան մէջ է, որ դուման այլ ևս գործելու ոչինչ չունի....

—

Մեզ տեղեկացնում են, որ Թիֆլիսի բաղնիսները դարձեալ ամենաողորմելի, կեղտոտ և որև է կարգին հսկողութիւնից զուրկ դրութեան մէջ են։ Էլի նոյն երգը, էլի նոյն ցաւը, էլի նոյն գանգատը։ Վերջապէս ուշադրութիւն կը դարձնվի այդ բանի վրա, թէ ոչ, մանաւանդ երբ տարափոխիկ հիւանդութիւնները չատացել են։

—

Վանից գրում են, որ այս տարի էլ, ինչպէս և անցեալ տարի, երկրաչարժ եղաւ այնտեղ և այնքան զգալի կերպով, որ չատերը տներից և խանութներից դուրս փախան։

—

Թիֆլիսի «Հրատարակչական ընկերութիւնը», երկար տատանվելուց յետոյ, որոշել է տպագրել հանգուցեալ Ս. Պալասանեանի «Հայոց պատմութիւնը»։ Ընկերութեան երեսը պարզացնելու համար այդ էլ մի բան է։

—

Պետերբուրգի բարձր կառավարութեան ներկայացրած է մի նոր նախագիծ, որի նպատակն է ոչնչացնել ձիագողութիւնը։ Այդպիսի մի նախագծի ընդունելն ու իրագործելը անյետաձգելի մի պահանջ պէտք է համարել, որովհետև ձիագողութիւնը և առհասարակ ընտանի անասունների գողանալը կազմում է նոյն իսկ Անդրկովկասում գիւղական աղգաբնակութեան խաղաղ կեանքի արգելքներից մէկը։

—

Թիֆլիսի բէալական դպրոցի ուսուցիչ, պ. Ստասենկո, ինչպէս հաղորդում են տեղական ռուս լրագիրները, սկսել է շաբաթը մի անգամ, երկուշաբթի օրերը, բէալական դպրոցի լաբորատորիայում դասախօսութիւններ կարդալ քիմիայից Թիֆլիսի վարժուհիների ընկերութեան անդամուհիների համար։ Ցանկալի է, որ հայոց դպրոցների վարժուհիներն էլ, որոնք հայոց դպրոցներից չատ քիչ պաշար են դուրս բերել բընական գիտութիւններից, յաճախէին այդ օգտաւէտ դասախօսութիւնները։

—

Մողնու եկեղեցու ծխական պարոնը խնդրում է մեզ յայտնել, որ այդ եկեղեցում գանձանակ չրջեցնելու մասին «Մշակի» մէջ տպված լուրը սխալ էր, և խնդրում է ուղղել այսպէս. «Բոլոր գանձանակները յիշեալ եկեղեցում առաջվայ պէս չրջեցնում, են բացի լուսարարինը և տիրացուներինը»։

—

ԳԱՆՁԱԿԻՑ մեզ գրում են. «Տեղիս Ս. Յովհաննէս եկեղեցու երկսեռ դպրոցների ուսուցչական խումբը պատրաստվում է մօտ օրերումս մի ներկայացում տալ։ Կը խաղան «Օրիորդ Բէրոյեան» և «Դալալ Ղազո» պիէսաները։»

—

ԳԱՆՁԱԿ գաւառի զինուորակոչական ատեանը, ինչպէս մեզ գրում են, վերջացրեց իր գործունէութիւնը։ Ամբողջ գաւառից զինուոր ընկան այս տարի՝ 44 հայ, 3 գերմանացի գաղթականներ, 2 դուխօբօրներ և 4 մալականներ։

—

Մեզ գրում են ԳՕՐԻՍԻՑ հետևեալը. «Ամսիս 10-ին զինուորական ատեանը աւարտեց իր գործը։ Բժշկական քննութեան ենթարկվելուց և երդում տալուց յետոյ, վիճակ ընկած զինուորները արձակվեցան իրանց տները մինչև դեկտեմբերի 10-ը, իսկ ապա նրանք պէտք է ներկայանան Շուշի, զինուորների գլխաւորին։ Գօրիսի և նրա չրջակայ գիւղերից 34 մարդ ընկան զինուոր։»

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՆԳԼՕ-ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԻՒՆ

Պարիզում հրատարակվող «Figaro» լրագիրը նորերս լուրեր հրատարակեց այն դաշնակցութեան մասին, որը իբրև թէ կապված է գաղտնի կերպով Անգլիայի և Գերմանիայի մէջ։ Այժմ այդ լրագիրը կրկին դառնում է այդ հարցին կըրկնելով իր հաղորդածը նոր մանրամասնութիւններով։ Հարցը այնքան էլ Անգլիայի և Գերմանիայի պետական համաձայնութեան մէջ չէ ամփոփվում, որքան այն անձնական համաձայնութեան մէջ, որը կայացրել են իրանց մէջ լորդ Սալիսբրի և իշխան Բիսմարկ։ Համաձայնութեան պայմանները կայանում են այն պարտաւորութիւնների մէջ, որ յանձն է առել Սալիսբրի, թէ Անգլիան Գերմանիայի հետ համերաշխ կերպով կը գործի այն պետութիւնների դէմ, որոնցից մէկը կամ միւսը պատերազմ կը յայտնի Գերմանիային։ Անգլիայի աջակցութիւնը պէտք է լինի ծովային օգնութեամբ։ Անգլիան չի դիմադրի, որ Իտալիան գրաւի Տրիպոլիսը։ Ռուսաստանի միջամտութեանը բալկանական գործերում նա չի համարի casus belli, միւս կողմից նա չի պաշտպանի Աւստրիային այն դէպքում, երբ Աւստրիան կը ցանկանայ դիմադրել Ռուսաստանի միջամտութիւնը Բալկանիայում։ Ընդհանրապէս Անգլիան պարտաւորվում է նպաստել ըստ կարելոյն եւրոպական խաղաղութեան պահպանութեանը։

Իր կողմից Գերմանիան պարտաւորվում է ոչ մի ընդհարման պատճառ չը տալ Եւրոպայում։ Ամեն մի յարձակողական կամ պաշտպանողական գործողութիւն Գերմանիայի կողմից՝ կը ոչնչացնի ներկայ համաձայնութիւնը։ Գերմանիան և նրա դաշնակիցները կաջակցեն Անգլիային այն դէպքում, երբ մեծ պետութիւններից որ և է մէկը յարձակում կը գործի նրա վրա։ Գերմանիան աջակցութիւն կը ցոյց տայ անգլիական քաղաքականութեանը Եգիպտոսում, Հայոց հարցում, և Բալկանեան թերակղզու վերաբերմամբ, ոչ մի որոշում չընդունելով, առանց նախօրօք համաձայնութիւն կայացնելու Անգլիայի հետ։ Ընդհանրապէս Գերմանիան ըստ կարելոյն կաշխատի Եւրոպայի խաղաղութեան պահպանութեան համար։

«Figaro»-ի այդ տեղեկութիւնների առիթով արմատական «Justice» լրագիրը նկատում է, որ իսկապէս այդ բոլորը անկարելի մի բան չէ։ Բայց և այնպէս լրագիրը ասում է, որ այդպիսի մի համաձայնութիւն շատ էլ սարսափելի չէ,— Սալիսբրի յաւիտենական չէ, իսկ այդ դէպքում երբ իշխանութեան ղեկը իր ձեռքը կառնի Գլադստոն, այդ համաձայնութեան մասին, ի հարկէ, միայն յիշողութիւններ կը մնան։

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

—Բոլգարական կառավարութիւնը հրացանների նոր պատուէր է տուել աւստրիական գործարաններին։

—Անգլիական կառավարութիւնը յայտնել է Հռոմի պապին, որ Անգլիան դէմ չէ պապի ցանկութեան՝ բնակութիւն հաստատելու Մալտա կղզու վրա այն դէպքում, երբ պապը ստիպված կը լինի հեռանալ Իտալիայի մայրաքաղաքից։

—Վիէննայի լրագիրները նոր բաղ են արձակում, որ իբրև թէ Վիլհելմ կայսրը իր վերջին տեսակցութիւնների ժամանակ աշխատել է համոզել պետութիւններին՝ զինաթափ լինելու։ Գուցէ կարելի լինէր հաւատալ այդ լուրերին, եթէ միւս կողմից չը տեսնէինք, թէ ինչպէս ինքը Գերմանիան առաջին օրինակն է տալիս՝ օրից օր աւելի թունդ զինաւորվելու մէջ։

—Ֆրանսիական մի քանի լրագիրներ հաղորդում են, որ գալ տարի Վիլհելմ կայսրը մտադիր է Ամերիկա գնալ։

—Բերլինից հեռագրում են մայրաքաղաքի ռուս լրագիրներին, որ Բերլինի համայնական ընտրութիւնների ժամանակ սոցիալիստները յաղթութիւն տարան։ Հակասեմիտականները վերջնականապէս յաղթվեցան։

—Մադրիդից հասած լուրերին նայելով Սպանիայի կատալոնիա նահանգում խիստ իռոլութիւններ են սկսվել։ Կաստէլլար գաղտնի կերպով Բարցէլօնա ուղևորվեց։

—Ինչպէս երևում է Ամէնքից ստացած լուրերից, Տրիկուպիսի կուսակիցները հեռացնում են դէպի ընդդիմադրական կուսակցութիւնը։

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Պարիզի ցուցահանդէսը մուտք ունեցել է $49^1/_2$ միլիոն, իսկ ծախս՝—$41^1/_2$ միլիոն, այնպէս որ ցուցահանդէսը զուտ արդիւնք տուել է 8 միլիոն։

*
* *

Մի ամերիկացի—հանաքի համար—ճանապարհորդեց ամերիկական բոլոր երկաթուղիներով՝ առանց մի կօպէկ անգամ վճարելու։ Ճշմարիտ է, նրան 180 անգամ երկաթուղու գնացքից դուրս գցեցին, բայց և այնպէս նա իր նպատակին հասաւ։

*
* *

Ռիլլերբանում նորերս մի սարսափելի գաղտնիք բացվեց. 15 տարեկան մի պատանի բռնաբարել էր իր 3 տարեկան քրոջը։ Մայրը նկատելով, որ երեխան հիշանդի նման է, բժիշկ կանչեց, և բանից երևաց, որ խեղճ երեխան վարակված է անբուժելի ցաւով։ Քննիչի մօտ 15 տարեկան չարագործը խոստովանեց իր արածը, և ամենաանպատկառ կերպով պատմեց իր չարագործութեան բոլոր քստմնելի մանրամասնութիւնները։

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՀԻՒՍԻՍԱՑԻՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 13 Նոյեմբերի։ «Новости» լրագիրը հաղորդում է Պետերբուրգի համալսարանի պետական քննութիւնների մասին հետևեալ տեղեկութիւնները. «Ֆիզիկո-մաթեմատիական ֆակուլտէտի յանձնաժողովում, մաթէմատիկայի բաժնից քննութիւն բռնեցին և աւարտեցին 31 հոգի, որոնցից 25-ը ստացան 1 աստիճանի դիպլոմ, և 6-ը 2 աստիճանի ատտէստատներ. բնագիտական բաժնից աւարտեցին 19 հոգի, որոնցից 13-ը 1 աստիճանի դիպլոմով, և 6-ը 2 աստիճանի. արևելեան ֆակուլտէտից—7, դրանցից 5-ը քննութիւն բռնեցին 1 աստիճանի դիպլոմով և 2-ը երկրորդ աստիճանի դիպլոմով. լեզուագիտական ֆակուլտէտից—21 հոգի. քննութիւն բռնեցին 18, նրանցից 10-ը 1 աստիճանի դիպլոմով, և 8-ը 2 աստիճանի դիպլոմով. իրաւաբանական յանձնաժողովում քննութիւն էին բռնում 108 հոգի. քննութիւն բռնեցին 85 հոգի. դիպլոմների տալը դեռ չէ որոշված։»

ԼՕՆԴՕՆ, 13 Նոյեմբերի։ Գահիրէից հաղորդում են, որ Մահդին իր զօրքերը կենտրոնացնում է Օմդուրմանի մօտ, ցանկանալով ուժեղացնել Գոնգոլայի բերդապահ զօրքը. ենթադրում են, որ նա մտադրութիւն ունի նոր արշաւանք գործել դէպի Եգիպտոս, Ֆաշոդայի մօտ իր կրած պարտութեան փոխարէն վրէժխնդիր լինելու նըպատակով։ Դերվիշները իրանց ոյժերը չեր քաշեցին և շարունակում են յարձակումներ գործել Աբիսինիայի վրա։ Հասարակաց նահանգների մեծ մասը նրանց ձեռքումն է։ Այդպիսով դերվիշների ձերքում կայ զինաւորված մեծ ոյժ, որը կարող են գործ դնել պատերազմական ուրիշ գործողութիւնների համար։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 14 Նոյեմբերի։ Հրատարակված է Բարձրագոյն հրաման. Ոչ-քրիստոնեայ դաւանութեան պատկանող անձանց երդուեալ և մասնաւոր հաւատարմատարների թուում ընդունել՝ դատաստանական որոշ հաստատութիւնների և երդուեալ հաւատարմատարների խորհրդի միջոցով, մինչև այդ մասին առանձին օրէնք հրատարակելը, կարելի է միմիայն արդարադատութեան մինիստրի թոյլատրութեամբ, յիշեալ հաստատութիւնների և խորհրդների այդ մասին արած առաջարկութեամբ։—Թէհրանի դեսպան իշխան Դոլգորուկիյ, իր խնդրքի համաձայն, արձակված է պաշտօնից. նրան շնորհված է Ս. Վլադիմիրի 2 աստիճանի շքանշան։—Եգերմէյստեր իշխան Բարիատինսկու փոխարէն՝ կայսերական որսորդութեան գլխաւոր է նշանակված Ֆլիգել-ադիւտանտ իշխան Գոլիցին։ 1890 թուականի ամառը Տաշկենտում կը կայանայ գիւղատնտեսական և արդիւնաբերական ցուցահանդէս։ Բացի արդիւնաբերական 8 բաժիններից կը լինեն երեք յատուկ բաժիններ.—գիտական, զինուորական-պատմական և դպրոցական. այդ բաժինների կազմակերպութեանը շատ կարող են նպաստել այն անձինք, որոնք մասնակցել են երկրի նուաճման գործում, և իրանց մօտ հաւաքել են պատմական թանգարին նիւթեր։ Իրեղէնները կարելի է ուղարկել Տաշկենտ, ցուցահանդիսի կարգադրիչ մասնաժողովին։—«Новое Время» լրագիրը լսել է, որ գիտութիւնների ճեմարանի առաջարկութեամբ, ժողովրդական լուսաւորութեան, ծովային և հաղորդակցութեան ճանապարհների մինիստրութիւնների ծախսով՝ հիմնվելու է հիդրոգրաֆիական ինստիտուտ։

ՏՈՒՆԻՍ. 14 Նոյեմբերի։ «Miramar» նաւը. որի վրա գտնվում էր աւստրիական կայսրուհին, անցաւ Տունիսի մօտով։

ԲԵՐԼԻՆ. 14 Նոյեմբերի։ Պրինց Լուի Նապոլէոն երէկ Բերլինից գնաց Պետերբուրգ՝ ռուսաց զինուորական ծառայութեան մէջ մտնելու համար։

ՎԻԷՆՆԱ. 14 Նոյեմբերի. Բոհեմական սէյմի մէջ բուռն վիճաբանութիւններ եղան, այն պատճառով որ առաջարկվում էր Հուսսի անունը դնել նահանգական մուզէյի ճակատի վրա։ Մի քանի պատգամաւորներ, ի միջի որոց և Շվարցենբէրգ իշխանների կրտսերը, խիստ ճառեր ասեցին Հուսսի կողմնակիցների դէմ։ Այդ գործը ժողովրդի մէջ յուզմունք է առաջ բերում։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ. 15 Նոյեմբերի։ Երէկ, Թագուհու կայսրուհու ծննդեան տօնի պատճառով Գատչինոյի պալատում կար նախաճաշիկ։ Մայրաքաղաքի եկեղեցիներում մաղթանքներ կատարվեցան։ Իսահակեան մայր-եկեղեցում կատարված մաղթանքներից յետոյ, բերդից ողջոյնվեց թնդանոթաձգութեամբ։ Երեկոյեան Պետերբուրգը լուսաւորված էր։ Բոլոր թատրոններում ներկայացումները սկսվեցան ազգային օրհներգով, որը մի քանի անգամ կրկնել տուեց հասարակութիւնը։

—

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԲՕՐՍԱ

Նոյեմբերի 13-ին

Լոնդոնի վրա 10 ֆունտ արժէ— . .	93 ր.	80 »
Բերլինի վրա 100 մարկ — . .	45 »	95 »
Փարիզի վրա 100 ֆրանկ — . .	37 »	$22^1/_2$ »
Ոսկի — արժէ — . .	7 »	58 »
Մաքսային կուպօններ — . .	151 »	— »
Արծաթ — — — . .	1 »	10 »
Բօրսային դիսկօնտներ — . . .	6 և	7% »
Պետակ. բանկ. 5% տոմս 1-ին չրջանի	99 »	25 »
— — — — 2-րդ —	98 »	87 »
— — — — 3-րդ —	98 »	87 »
— — — — 4-րդ —	98 »	87 »
— — — — 5-րդ —	99 »	25 »
— — — — 6-րդ — .	98 »	87 »
Նոր 4%	83 »	75 »
Արևելեան 5% փոխառութ. 1-ին չրջ.	99 »	— »
— — 2-րդ —	99 »	— »
— — 3-րդ —	99 »	— »
Ներքին 5% առաջին փոխառութ.	245 »	50 »
— երկրորդ —	224 »	50 »
$3^1/_2$% բէնտա.	101 »	87 »
Ոսկեայ բէնտա.	171 »	50 »
Եօթերորդ կոնսոլիդ. փոխառ. . .	141 »	— »
Նոր երկաթուղային բէնտա . . .	98 »	75 »
5% գրաւակ. թղթեր կալուած.		
փոխ. կրեդ. ընկ. մետ.	147 »	— »
— — թղթադ. .	91 »	62 »
Գրաւ. թղ. Ազնւ. բանկի . . .	98 »	— »
Գիւղական բանկի	102 »	— »
6% գրաւ. թղ. Թիֆլիսի—27 և 43տ.	— »	— »
— —Ռութայիսի-18 և 43տ.	— »	— »
Ս. Պետերբուրգի քաղաքային օբլիգացիաներ	93 »	75 »
Մոսկվայի քաղաք. օբլիգացիաներ. .	93 »	50 »
Ոդեսայի — . — .	93 »	12 »
Թիֆլիսի քաղաք. կրեդ. ընկ. օբլ. .	— »	— »

Ս. Պետերբուրգի բօրսայի տրամադրութիւնը հանդարտ է։

Խմբագիր-հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԹԻՖԼԻՍԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ԿՐԵԴԻՏԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ *հրաւիրում է ցանկացողներին կապալով վերցնել գեներալ* ՏԷՐ-ԱՍԱՏՈՒՐՈՎԻ *նախկին* ԿԱԼՈՒԱԾՔԸ, *որը գտնվում է Երևանեան հրապարակի վրա, Պուշկինսկայա փողոցի և Միջին-փողոցի անկիւնում։ Պայմանագիրները կարելի է կարդալ Ընկերութեան Վարչութեան մէջ ամեն օր, առաւօտեան ժամը* 11-*ից մինչև* 1-*ը կէսօրից յետոյ։ Ցանկացողների յայտարարութիւնները այդ մասին կընդունվեն մինչև դեկտեմբերի* 5-*ը ներկայ տարվայ, Ընկերութեան Վարչութեան մէջ, Սերգիևսկայա փողոցում, Ամիրաղովի տանը։* 1—3

ԹԻՖԼԻՍԻ ՀԱՅԵՐԷՆ ԳՐՔԵՐԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԵԱՆ

ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՊԱՀԵՍՏՈՒՄ ՎԱՃԱՌՎՈՒՄ ԵՆ ՀԵՏԵՒԵԱԼ ԳՐՔԵՐԸ

1) «Թաւամազ մեղու», հեղ. Աւենարիուսի, թարգմ. օր. Ն. Տէր-Մարկոսեանի . — ր. 40 կ.
2) «Կարմիր լապտեր,» Վուչէտիչի, թարգմ. օր. Տէր-Մարկոսիանի . . . . . — » 30 »
3) «Մանկական երգեր» Գամառ-Քաթիպայի . . . . . — » 15 »
Նոյնը փառակազմ . . . . . — » 25 »
5) Մորեխ և նրա ջնջելու հնարները, աշխ. Հ. Տէր-Բարսեղեանի . . . . . — » 10 »
6) Նեղ և խոնաւ բնակարաններ, Հ. Առաքելեանի. . . . . — » 10 »
7) Մովսէս Խորենացի, Պատմութիւն . . . . . — » 80 »
8) Մօրիս Բլօկ, ձեռնարկ գործնական տնտեսութեան, փոխադր. Ս. Պալասանեան. — » 50 »
9) Գառնուկ և լուսատնիկ, Շմիտտի. . . . . — » 25 »
10) Ռոբինզօնի պատմութիւնը, թարգմ. Գիւտ քահանայ Աղանեան . . . . . — » 60 »
11) Գամառ-Քաթիպա, բանաստեղծութիւնք. . . . . — » 50 »
Նոյնը փառակազմ . . . . . 1 » 20 »
12) Վիլհելմ Հաուֆ, Ուխտաւորը։ թարգմ. Ռ. Պատկանեան. . . . . — » 75 »
13) Սայաթ-Նովայ, աղգային երգիչ . . . . . — » 5 »
14) Ծննդեան պատմութիւն. . . . . — » 10 »
15) Ադաթանգեղեայ պատմութիւն. . . . . 1 » — »
16) Գիւղական խալիֆա, Ալ. Արարատեանի . . . . . — » 50 »
17) Վանայ սաղ, ժող. Շերենց . . . . . — » 75 »
18) Փնջիկ, բանաստեղծութիւնք Ալ. Արարատեանի . . . . . — » 20 »
19) Նամուս, վէպ Շիրվանզադէի . . . . . 1 » — »
20) Սանփանոսի Տարոնեցու Աստղեան պատմութիւն Տիեզերական . . . . . 2 » — »
21) Ղեոնդ պատմագիր . . . . . 1 » 50 »
22) Թիֆլիսեցոյց մտաւոր կեանքը, մ. Ա. Գ. Տէր-Մէլքսանդրեանի . . . . 1 » 50 »
Նոյնը ընտիր թղթի վրա . . . . . 2 » 50 »
23) Սրբազան պատմութիւն հին ուխտի։ Աշակերտների համար Ս. ք. Սահակեան. — » 30 »
24) Դասագիրք կրօնի։ Ուղեցոյց ուսուցիչների համար Ս. ք. Սահակեան. . . 1 » 75 »
25) Սոկրատէս, թարգմանութիւն օր. Թեկղի Ստեփոյեան . . . . . — » 10 »

Նոյն տեղ վաճառվում են նաև՝

1) Ուսումնարանի առողջապահական հարցեր, բժ. Ա. Բաբայեանի. . . . . 1 » — »
2) Կրքեր, բժ. Ա. Բաբայեանի . . . . . — » 30 »
3) Բռնի միութիւն հայոց Լեհաստանի ընդ եկեղեցւոյն Հռովմայ. Կ. Եղեանց. . 2 » — »
4) Թորոս Լեոնի, Ծերենցի . . . . . 1 » — »
5) Թէոդորոս Ռշտունի, Ծերենցի . . . . . 1 » — »
6) Երկունք Թ. դարու, Ծերենցի . . . . . 1 » — »

Գրքերի ճանապարհածախսը վարչութեան վրա՞է։ Բացի այդ՝

Մինչև 25 ր. գիրք առնողներին լինում է 5% զիջումն։
Մինչև 50 ր. » » » 10% »
50 ր. աւելի » » » 15% »

Հասցէն՝ Тифлисъ, Правленіе Общества изданія армянскихъ книгъ.

ՎՐԱՍՏԱՆԻ ԵՒ ԻՄԵՐԼԻԹ ՎԻՃԱԿԱՅԻՆ ԿՈՆՍԻՍՏՈՐԻԱՅԻ *Հրաման Համաձայն սրանով հրաւիրում եմ* ՀԱԼԼԱԲԱՐԻ ՇԱՄՔՈՒԵՑԻՈՅ Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑՈՒ *մեծապատիւ ծխական ժողովուրդներին շնորհ բերել նոյն եկեղեցու արական դրսոյի զահլիճը, կիրակի նոյեմբերի* 19-*ին, առաւօտեան ժամը* 10-*ին կատարելու Շամքոռեցւոց եկեղեցու* ՆՈՐ ԵՐԵՑՓՈԽԱՆԻ ԵՒ ՀԱՇՈՒԱՏԵՍՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹԻՒՆԸ *ս. պատարագից յետոյ։*

Վերատեսուչ բարեկարգութեան եկեղեցիների հայոց Հալլաբարի Աշոտ քահանայ Թէմուրազեանց։ 1—2 (Հ. Շ.)

COMPAGNIE DES MESSAGERIES MARITIMES

PAQUEBOTS-POSTE FRANÇAIS.

ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՆԱՒԱԳՆԱՅՈՒԹԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԸ

(ՄԵՍԱԺԸՐԻ ՄԱՐԻՏԻՄ)

Կանոնաւոր և ուղղակի երթևեկութիւն ՄԱՐՍԵԼԻ *և* ԲԱԹՈՒՄԻ *մէջ և փոխադարձ։*

Ուրբաթ, 24 *Նոյեմբերի* ԲԱԹՈՒՄԻՑ *դուրս կը գնայ շոգենաւ* ERUMANTHE (ԷՐԻՄԱՆԹ) *նաւապետ* MERLIN (ՄԷՐԼԷՆ), *մտնելով* Կ. Պոլիս, Պորտ-Լահօս *և* Լակավալ։

Ագենտները՝ ԲԱԹՈՒՄՈՒՄ *պ.* Գ. ԷՍՍԷՆԺԷՐ, ԹԻՖԼԻՍՈՒՄ ԳԷՈՐԳ ՀԵՋՈՒԲԵԱՆՑ, *իսկ* ԲԱԳՈՒԻ *մէջ* ԳՕԼԴԼՈՒՍ։ 1—2

ОТКРЫТА ПОДПИСКА НА 1890 ГОДЪ НА ЖУРНАЛЪ

„МЕДИЦИНСКАЯ БЕСѢДА“

ПОДЪ РЕДАКЦІЕЮ А. Х. САБИНИНА.

ГОДЪ IV

«Медицинская Бесѣда» имѣетъ цѣлью знакомить общество, черезъ посредство общедоступныхъ статей, съ современнымъ направленіемъ врачебной науки и съ желательною постановкою врачебнаго дѣла. Земскіе санитарно-медицинскіе вопросы, статьи по общественной и частной гигіенѣ, статьи по различнымъ отраслямъ врачебной науки, школьная гигіена, аптечное дѣло, статьи по различнымъ отраслямъ естествознанія, врачебно-бытовые вопросы, врачебныя замѣтки и хроника, библіографическій отдѣлъ, историческія свѣдѣнія и замѣтки—вотъ основная часть программы журнала. «Медицинская Бесѣда», имѣя обширную, разностороннюю программу, будетъ служить, какъ и въ прошлыхъ годахъ, въ одинаковой степени интересамъ врачей и публики.

«Медицинская Бесѣда» выходитъ два раза въ мѣсяцъ (24 номера въ годъ), каждый рызъ въ объемѣ до 2-хъ печатныхъ листовъ.

Цѣна за годъ пять рублей, съ доставкой и съ пересылкой. Фельдшера, фельдшерицы, акушерки и сельскіе учителя платятъ 3 руб, въ годъ съ доставкой и пересылкой. Подписка отъ ннхъ принимается только въ конторѣ журнала.

Подписка принимается: въ Воронежѣ, въ конторѣ журнала (1-я Острогожская, д. Мюфке) и въ книжномъ магазинѣ В. В. Юркевича (Больш. Двор. ул., домъ Адлеръ), въ С.-Петербургѣ: въ книжномъ магазинѣ К. Л. Риккера (Невскій, № 14), въ Медико-Хирургическомъ магазинѣ Н. П. Петрова (Выборгская сторона, Нижегор., № 17); въ Москвѣ: въ книжномъ магазинѣ А. А. Карцева (Фуркасовскій переул., д. Обидиной) и въ конторѣ Н. Печковской (Петровская линія); въ Орлѣ, въ публичной библіотекѣ «Орловскаго Вѣстника»; въ Самарѣ, въ конторѣ редакціи «Самарской газеты»; въ Астрахани, въ Прикаспійскомъ магазинѣ, г. Рослякова, въ Оренбургѣ, у г. завѣдующаго библіотекой при Казенной Палатѣ. 1—4 (2 ն. 2 գ.)

ՊՐՕՎԻԶՕՐ **Ա. ՇՏԷԽԷՐԻ** ՄԻՋՈՑՆԵՐԸ

ԱՏԱՄՆԵՐԻ ՑԱՒԻ ԵՒ ՓՁԱՆԱԼՈՒ ԴԷՄ

ՊՕՊՕԼԵԱՆ ԱՏԱՄՆԱԴԵՂ ԿԱԹԻԼՆԵՐ 50 ԿՕՊ.
ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԿՕԿԱՑԻՆԵԱՆ ԱՏԱՄՆԱՑԻՆ ԷԼԻԿՍԻՐ 80 ԿՕՊ.
ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԱՏԱՄՆԱՑԻՆ ՓՈՇԻ 30 ԿՕՊ.

ԳԼԽԱՒՈՐ ՊԱՀԵՍՏ. ԹԻՖԼԻՍՈՒՄ՝ *Կովկասեան դեղավաճառատան, և պ. պ. Շահպարոնեանցի, Մակկէրի, Սէնչիկովսկու և Ագմուրովի դեղատներում։ ԲԱԳՈՒԻ մէջ, Բէկկէրի մօտ, ՔՈՒԹԱՅԻՍՈՒՄ՝ կոկոչեվի մօտ,* ՍՏԱՎՐՈՊՕԼՈՒՄ *Բրօխնօցկու մօտ և* ԵԿԱԵՐԻՆՕԴԱՐՈՒՄ։

39—52 (Հ.)

Ա. ՎՕԼՖՇՄԻՏ,

ՐԻԳԱ, Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ *և* ՀԱՄԲՈՒՐԳ.

գոյութիւն ունի 1845 *թուից։*

ԱՐԱՂ—ՔԱՇԵԼՈՒ *և* ՕՂԻԻ ԳՈՐԾԱՐԱՆ

Պատրաստում է մասնաւորապէս. ԱԲՐԻԿՕՏԻՆ, ԲԵՆԵԴԻԿՏԻՆ, ՇԱՐՏՐԷԶ, ԿԻՐԱՍՕ՝ *հօլլանդական, կակաօի, կաֆէի,* ՄԱՐԱՍԿԻՆ, *մրգերի* ԼԻԿԵՐՆԵՐ, ԿԻԵՎԻ *„Նալիվկաներ“, մրգերի „Նաստոյկաներ“,* ՏՄԻՆՆԻ *ասված արաղ, նմանապէս* ՕՂԻ, ՐՕՄ, ԿՕՆԻԱԿ, ԱՐԱԿ, *միակ իսկական* ՐԻԳԱՅԻ ԿՈՒՆՑԷՆԵԱՆ *խոտի* ԲԱԼԶԱՄ, ՍՊԻՐՏ, ՄԱՔԲՎԱԾ ՕՂԻ, ԹԹԻՄՈՐ *և այլն։*

Իմ պատրաստած արտասահմանեան լիկերներ իրանց յատկութեամբ պակաս չեն ներմուծվածներից, բայց անհամեմատ էժան են։ Նրանք արժանացան թէ համաշխարհային և թէ այլ ցուցահանդէսներում ամենաբարձր պարգևների։

Օղիի գործարանի արդիւնարերութիւնները ծախվում են բոլոր գինեվաճառանոցներում։ Պրէյսկուրանտները ուղարկվում են անվարձ։

4—10 (Հ.) № 1

UN ANGLAIS donne des leçons de langue anglaise. S'adrésser au bureau de la Rédaction du journal arménien le «Mschak».

АНГЛИЧАНИНЪ даетъ уроки англійскаго языка. Обратиться за адресомъ въ редакцію газеты «Мшакъ.»

ՄԻ ԱՆԳԼԻԱՑԻ *տալիս է անգլիական լեզուի դասեր։ Դիմել «Մշակի» խմբագրութեան։* 7—10 (Հ.)

ОТКРЫТА ПОДПИСКА НА 1890 Г.

(ТРЕТІЙ ГОДЪ ИЗДАНІЯ)

„ПАНТЕОНЪ ЛИТЕРАТУРЫ“

ЕЖЕМѢСЯЧНЫЙ ИСТОРИКО-ЛИТЕРАТУРНЫЙ ЖУРНАЛЪ.

Въ предстоящемъ году „Пантеонъ Литературы“ будетъ издаваться по прежней программѣ и при участіи прежнихъ сотрудниковъ.

Въ числѣ произведеній, предназначенныхъ къ помѣщенію въ первыхъ книжкахъ журнала, назовемъ слѣд: 1) Полное собраніе сочиненій Василія Петровича Боткина, автора „Писемъ объ Испаніи“ и пр., 2) Поэмы Оссіана, перев. съ примѣч. и предисловіемъ Е. В. Балобановой, 3) Письма темныхъ людей, перев. А. И. Кирпичникова, 4) Чосеръ, Кентерберійскіе разсказы, перев. М. И. Кудряшева, 5) Аріосто, Неистовый Роландъ, поэма, перев. С. Ф. Уварова 6) Л. Н. Майкова, Матеріалы для біографіи Вал. Н. Майкова, 7) М. Гюйо, Современная эстетика, и мн. др.

ПОДПИСНАЯ ЦѢНА: Съ дост. и перес. на годъ. 8 р., 6 мѣс. 5 р., 1 мѣс. 1 р.,

Выписывающіе „Пантеонъ Литературы“ за 1888 и 1889 гг. уплачиваютъ: за всѣ три года—20 р., за два года—15 р. Разсрочка платежа—по соглашенію.

Подписка принимается: въ редакціи журнала „Пантеонъ Литературы“ въ Спб., Захарьевская, д. 19, а также въ книжныхъ магазинахъ „Новаго Времени—въ С.-Петербургѣ, Москвѣ, Харьковѣ и Одессѣ. Книгопродавцамъ дѣлается уступка въ размѣрѣ 5%.

2—5 Редакторъ-издатель А. Чудиновъ.

Լոյս տեսաւ Ց. Իսսուֆեանի *հրատարակութեամբ առանձին գրքոյկով*

ԵՆԻՉԵՐԻ

(Թիւրքահայերի կեանքից)

Գրեց Վ. Փափազեանց

(Արտատպած „Մշակ“ լրագրից)

Գինն է 5 *կոպէկ։*

2—5

Յայտարարվում է ի գիտութիւն թարգմանիչների, որ արդէն թարգմանված է ռուսերէնից „ԳԱԼԵԱՅ“ *գրքոյկը։* Թ. Ստեփոյեանց։ 2—2

ՊԵՏԵՐԲՈՒՐԳԱՅ ԱԿԱԴԵՄԻԱՆ ԱՒԱՐՏԱԾ

ՄԻ ԵՐԻՏԱՍԱՐԴ

ՅԱՆԿԱՆՈՒՄ Է ՄԱՍՆԱՒՈՐ ԴԱՍԵՐ ՈՒՆԵՆԱԼ։ *Համաձայն է պարապել գիմնազիական բոլոր առարկաներից, բացի հին լեզուներից։ Համաձայն է և կրկնութիւններ անել։ Հասցէն կարելի է իմանալ „Մշակի“ խմբագրատանը։* 4—5

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԵՒ ԿՈՎԿԱՍԵԱՆ ԴՐԱՎԱՃԱՌԱՆՈՑՆԵՐՈՒՄ

Վաճառվում են պակասեցրած գներով ԲԱՐՍԵՂ ՔԱՄԱԼԵԱՆԻ *հետևեալ հրատարակութիւնները՝*

ՀԱՄԼԷՏ

Ողբերգ. գինը 60 *կոպ.*

ԷԼԻԶԱՅԻ ՎԻՇՏԸ

Գինը՝ 10 *կոպ.*

ԷՄՄԱՆՈՒԷԼ ՄԱՆԻԻ ԹԱՂՈՒՄՆ

Գինը՝ 5 *կոպ.*

Այս գներով վաճառվում են միմիայն Թիֆլիսում։

5—6

Дозволено цензурою, Тифлисъ 15 Ноября 1889 г. Типографія Канцеляріи Главнонач. Гражд. час. на Кавк., Лорисъ-Меликовск. ул. д. каз.